


ՏՆՕՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓՐԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳԻՐ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկն. ողջ դն. 80
» վեցամսեայ » 50
» տարեկան » 100
» տարեկան օտարերէն 25
» տարեկան օտարերէն 44
» Գրաստի ծախսը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

ՇՈՒՐՋԸ

Պէտք չէ թարգմանել Եգիպտոսի Հայոց
առաջնորդական տեղապահ ընտրուեցաւ
այնպիսի միջոցի մը, ուր տեղական աղբային
պէտքերը չա՛տ են և գործելու անսովոր ե-
ռանդ մը կ'ընդունարուի ժողովականներուն
վրայ. առիթը նպատաւոր է օգտուելու հա-
մար այս բարի տրամադրութիւններէն և մի-
եւնոյն ատեն դոհացում տալու բազմադիմի
կարօտութիւններու : Տ. Յակոբ Աշոտ վարդա-
պետ բացառիկ պատուի մը արժանացաւ ուղ-
ղակի երեսփոխանական ժողովէն ընտրուելով
որուն համաձայն գտնուեցան նաեւ վարչական
մարմինները, մինչ այս վերջիններան ք-
իսկ կրնար կատարուիլ տեղապահի ընտրու-
թիւն : Այս պարագան միայն բաւական է բա-
ցատրելու իր պաշտօնին ընծայուած կարեւո-
րութիւնը և իրմէ սպասուած լուրջ աշխա-
տութիւնը :

Դեռ մինչեւ մէկ ամիս առաջ ամեն գործ
ծանրաբեռնուած էր Բաղարական ժողովին
վրայ, որուն անդամները՝ ողբան ալ գործօն
անկարող էին հասնելու բոլոր ճիւղերուն ու
ծերունի քահանայի մը վրայ որ իր յիսամեայ
յոբէլեանին մատեցած՝ վաղուց իսկ պէտք կը
զգար հանգստեան : Երեսփ ժողովին գիւա-
նը, այս կացութիւնն ըմբռնելով, պատրաս-
տեց կանոնական ընդարձակ ծրագիր մը՝ որ
չորս առանձին հոգաբարձութիւններու կազ-
մութիւնը կը տրամադրէր զծելով իւրաքան-
չիւրին իրաւասութեան ու պարտականութեան
սահմանը և ցոյց տալով միանգամայն հասցի
կարգ մը նոր աղբիւրներ, մատակարարութեան
գործը գիւրացնելու համար :

Ապրիլ 19ի նստին, երեսփ ժողովը մէկ
շունչով քուէարկեց այդ չորս կանոնադրուե-
լը : Իսկ մայիս 19ի և 21ի յաջորդական նիս-
տերուն մէջ համաձայնեցաւ կարգ մը յոգ-
ուածներու բարեփոխման մասին, յառաջի-
կային վերապահելով դեռ ինչ որ կը մնայ
գործադրելիութեան հանգամանքէ զուրկ կամ
բարեփոխելի, զոր իւրաքանչիւր հոգաբար-
ձութիւն պիտի նշմարէ և հարկ եղածը անօ-
րինէ տեղապահին հետ համախորհուրդ : Այս
գիւրութիւնը, որ առաջը կ'առնէ կարգ մը
չափազանցուած տրտունջներու, կարելի է

բարեգուշակ համարիլ և ի պատիւ երեսփո-
խանութեան :

Կարգը եկած է հիմակ հոգաբարձուե-
րուն : Դպրոց մը ունինք որ գաւառային նա-
խակրթարանէ մը չի տարբերիր, զոր այցելողը
եգիպտական ոստանէն Սղերդի մէկ անկիւնը
տեղափոխուած պիտի կարծէր ինքզինքը. գե-
րեզմանատուն մը՝ անկարգ, անխնամ, աղ-
քաւներ՝ մեռելներէն ոչ նուազ լքուած. այս-
պէս նաեւ եկեղեցւոյ մատակարարութիւնը :
Այս չորս ճիւղերուն մէջ ալ հիմնական ու
խղճամիտ աշխատութիւններ կան կատարելիք-
ժողովուրդէն կը սպասուի պարտաճանաչու-
թիւն, որ պիտի գիւրացնէ հոգաբարձու-
թիւններուն պաշտօնը, և այս վերջիններէն՝
եռանդ մը որ չի հալի ամբան առաջին տա-
պերուն առջեւ. ու երկուքէն՝ փոխադարձա-
բար գիրար հասկնալու բարի տրամադրու-
թիւն :

Այս պայմաններուն մէջ, անձուիրութեան
ու գործունէութեան աւագ բաժինը կը ծան-
րանայ հոգեւոր պետին վրայ որ կաշուած է
նախագահել բոլոր ժողովներուն : Վստահ ենք
որ Տ. Յակոբ վարդապետի քով, — որ Պոլսոյ
աղբային ու կրօնական շրջանակներուն մէջ ալ
սիրուած ու յարգուած եկեղեցական մըն է, —
չի պակսիր այդ անձնուիրութիւնը ու գործու-
նէութիւնը, բաւական է որ համերաշխութեան
ողի գտնէ իւրաքանչիւր ժողովականի քով :

Բուն ճիւղ մը երկու կողմէ և կը յու-
սանք թէ Եգիպտահայերը քիչ մը աւելի
սուք սրտով պիտի նային իրենց Առաջնորդա-
րանին, հրաժարելով այն անտարբերութե-
նէն որ յիշուի կամ յանիրաւի կը վերա-
գրուի անոնց :

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Առջակ Զօյանեան հրատարակեց ի Բա-
րիգ, — այն քուսկանին ուր դեռ գոյութիւն
չունէր «Փարոս»-ը, որով կրնանք իր նորու-
թիւն մը ներկայացունել մեր ընթերցողնե-
րուն, — Երանտէն գրիչի մը «Հայաստան,
իր պատմութիւնը, իր գրականութիւնը, իր
դերը աշխարհի մէջ» վերնագրով : Մարտ 9ին,
Աշխարհագրական ընկերութեան սրահին
մէջ, Անաթոլ Յրանսի նախագահութեամբ
կատարուած գումարման մը մէջ իր արտա-
սանած հրատարակչութիւնն է այն, մե-

ծանուն Ակադեմիականին մէկ յառաջաբանո-
ւոր ոչ գրումսին արժանիքը աւելի կը բար-
ձրացունէ :

Երիտասարդ ցրագէտն այդ հաստիկն մի-
ջոցաւ Երանսացի ժողովուրդին կը ներկա-
յացունէ մեր ազգային պատմութեան գրչ-
խառն գիծերը, մեր նախնեաց մատենա-
գրութիւնը, մեր ժամանակակից գրականու-
թիւնն ու յագործութիւնը, եւ կ'անցնի հայ-
կական խնդրոյն՝ լոյսով ու զայրոյթի ար-
դար շեշտերով :

Այդ հրատարակութեան կարեւորութիւնը
շեշտեալ համար քուսկան կը սեպեմք ա-
ռաջ քերել Անաթոլ Յրանսի յառաջաբանին
խանի մը տղերք :

«Հայր Եւրոպականի հետ» Պ. Զօյանեա-
նի կը պատկանի պատիւը Երանսացի ժո-
ղովուրդին առջեւ պարզաճշդապէս այն ահ-
«նելի կոտորածը որ երկար ամիսներէ հե-
«տէ դիւանագիտական զանգեմք մը կը մը-
«նար : Արդարեւ Պ. Զօյանեան հրատարա-
«կեց 1896 յունիսին, ի Բարիգ, հաւաքածոյ
«մը Հայաստանէն գրուած նամակներու,
«պարզ ու ահռելի պատմութիւններ որոնք՝
«Պ. Ժօրժ Բշեմեանսոյի փառաւոր մէկ յա-
«ռաջաբանովը՝ ստեղծուի և զայրոյթով
«համակեցին հասարակութիւն մը որմէ
«գրեթէ ծածուկ պահած էին իր կառավա-
«րութիւնն ու իր յագործ մեծագոյն մասը :

Զօյանեանի այս երկասիրութեան մէջ
կը գտնուի ոչ միայն հասարակութիւն մը իր
գրական կարողութեան որ այնքան լաւ կեր-
պով ի յայտ կուգայ նաեւ Երանտէնի մէջ,
այլ մանաւանդ եռանդուն արտայայտութիւն
մը իր հայրենասիրական զգացումներուն
որով ազգային դասին պաշտպանութեան կը
նուիրէ իր գրիչը : Այս երկու ձիւրերն ալ
զանգեմք մը չեն մեզի համար :

ՀԱՄԱԿՐԱՆՔ

Տիկին Աստան, նույն Ռոմիլի անօրէ-
նուհին, ծանօթ՝ նշանաւոր իւր գլխաւոր ու-
քան իւր համակիր հարստահարուած ժող-
վուրդներու՝ այդ հանգէտի մայիս 15ի թիւին
մէջ հրատարակած է շատ գեղեցիկ յօդուած
մը, առողջ դատողութիւնն ու անկեղծ զգա-
ցումէ լրիւս, ուր կը դատաւարարէ մեծ Տէ-
րութիւններուն համաձայնութիւնը՝ Յունաս-

տանն ընկնելու համար : Աւասիկ քանի մը հաստուածներ այդ յօդուածէն .

«Գերմանիոյ կայսրը, թագաւոր Բրուսիոյ, և Պ. Հանթօ ևր փառաւորութիւն իրենց պաշտպանեալը, իրենց բարեկամը, Սուլթան Ապտալի Համիտ յաղթող է : Թուրք զօրքերը կը դրանին Թեապիան, կ'աւրչակեն զայն, քաղաքները կ'ալըն, կը չարչարեն վիրաւորեալները, քահանաները, կրնորը ու տղաքները կը մորթեն, և ահ ու սարսափ կը տիւեն յունական հողին վրայ ինչպէս ըրին Հայաստանի մէջ :

«Պօն Կրումպրօֆ փաշան էր որ, թրքաց պատերազմական գիւրքերն աչքէ անցունելէ ետք, մինչ ուրիշ գերմանացի զօրավար մը — գեռ փաշայութեան չի բարձրացած — կը լրտեսէր յունական բանակը, ապահովեց Վիլհելմ Բ.ը թէ ինչ հաւանական ելք կրնայ ունենալ Թուրքիոյ և Յունաստանի միջեւ կրուի մը : Գերմանիոյ կայսրը համոզուելով հելլեններու գիւրքերուն, զինուորաց թիւին և դրամական միջոցներուն սկարութեանը վրայ, խորհուրդ տուաւ Սուլթանին՝ պատերազմ հռչակել :

«Մինչ գերման կէս-պաշտօնական թերթերն ի Պերլին և ի Կ. Պոլիս գոհունակութեամբ կը պատմեն ամենուն ծանօթ գէպքեր, օրինակի համար Փօն Կրումպրօֆի Լաւրիսա մանողներուն առաջինն ըլլալը, և մինչ համակ Գերմանիա եռանդագին կ'ողջունէ գերմանական յաղթանակներն Յունաստանի դաւառներուն մէջ, անգին՝ Պ. Հանթօյի բերան ելող թերթեր ողորմելի քաջութիւնը կ'ունենան Յունաստանն ընկնելու՝ ներկայացնելով զայն իբր պատերազմ ուղող և զրգռող կողմը : Ատոնք, իրենց սուտերով, կը ջանան խաղաղութեան բարեկամներու հաւանութիւնը վաստկիլ և կամ անամթաբար հեղին ժողովուրդին երեսին կը զարնեն իր անհեռատեսութիւնը : Բայց, պարոններ, սա իրողութիւնն իսկ թէ Յոյները պատերազմի պատրաստուած չէին ապացոյց մին է թէ պատերազմ չէին ուղեր : »

Տիկին Ատան՝ ցաւած սրտով ու տխուր շեշտերով՝ բազդատութեան կը դնէ Յունաստանի արդի կացութիւնը իր երկրին, Պրանսայի, 1870ի պարտութեան հետ, և երկուքին մէջ ալ կը գտնէ բիրտ ուժին յաղթանակը ժողովուրդի մը վրայ որ աշխարհի քաղաքակրթիչն եղած է դարերով, նոյն եղեռնական անտարբերութիւնը եւրպայի կողմէ, նոյն Գրիւրի թնդանօթները և այլն :

« Յունաստանի պատիւը փրկուած է սաւկայն : Իր յամառ թշնամիներէն զատ ո՛չ որ կրնայ տարակուսիլ այսօր հելլեն ժողովրդին դիւցազնական քաջութեանը վրայ : Այդ ժողովուրդը ցոյց տուաւ թէ փոքրամասնութիւնը կրնայ կանգնիլ մեծամասնութեան դէմ, և եթէ ոչ յաղթել անոր, դէթ մարտնչիլ անոր դէմ ու կասեցունել անոր յառաջխաղացութիւնը . Յունաստան կը հաստատէ իրաւունքին անբռնարարելիութիւնը՝ նոյն իսկ պարտութեան մէջ : Այն դառն փորձերուն մէջտեղ, որոնք կ'ընկճեն զինքը, եւրոպայի կառավարական ազդեցութեանց բեռան տակ ճգմուած, Յունաստան գրաւեց քրիստոնեայ ժողովուրդներու հոգին ու հիացումը և բարձր պահեց

անոնց դրօշակը . թո՛ղ ցոյց տայ իր քաղաքական իմաստութիւնն ու կանխատեսութիւնը, որով պիտի կրնայ ի գերեւ հանել իր հակառակորդներուն ամենէն վտանգաւոր հնարքները : »

Յօդուածագիր տիկինը յետոյ կը բացատրէ թէ ինչպէս Ռուսիոյ ու Աւստրիոյ շահերը ներհակ ըլլալով արեւելքի մէջ, այս պատճառաւ միայն միացան Թուրքիան պաշտպանելու, թէ ոչ անոնց միջեւ պատերազմը անխուսափելի պիտի գառնար : Եթէ Աւստրիան աչք չ'ունենար Մակեդոնիային՝ Սերանիկն ալ մէկտեղ, և եթէ Ռուսիա չ'ըղձար Վոսիտրի բանայիններուն, երկուքն ալ փոյթերնին չպիտի ընէին թէ Թուրքիան խորուեր է կամ ոչ : Աւստրիա չի կրնար հանդուրժել որ Դանուբի բերանը՝ Վոսիտրի վրայ, Ռուսիոյ ձեռքն անցնի, և Ռուսիա չի կրնար հանդուրժել որ Պալքանեան թերակղզին անցնի Աւստրիոյ տիրապետութեան տակ, որուն ետին կեցած է Գերմանիան :

Ուրեմն, երեք կայսրերուն միջեւ կնքուած համաձայնութիւնը չատ չատ զինադադար մը կրնայ նկատուիլ (1) :

Հ Ա Ռ Ս

Սիւրեցի քեզ եւ դեռ միտս,
Պիտի սիւրեմ, բայց հոգ չե՛
Թե կը կրեմ ցաւ ու վիշտ,
Եւ եռ երեք փոյրքդ չե՛ :

Քեզ անձեղ չեմ կարող,
Ձի չ'ըսիր քեզիս պա՛տէս .
Բայց պաշտելս վերջն ալ քո՛ղ
Որ հողը զիս չ'լափէ :

ԱՐՄԱ

Ա.ԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Եղիպտոսի նախարարաց խորհուրդին ուրումամբ, Խտիվիյէի շոգենաւները ձրիաբար Կ. Պոլիս պիտի փոխադրեն Աղեքսանդրիոյ ու Գահիրէի հայ գաղթականները որոնց փոխադրութիւնը մինչեւ ցարդ կը կատարուէր 30 առ 100 զեղչով մը միայն :

Տարակոյս չունինք որ կրկին յանձնաժողովները պիտի փութան օգտուիլ այս դիւրութենէն, իրենց տեղը վերադարձունելու համար այն գաղթականները որոնք յօժարակամ կը փափագին մեկնիլ :

Կ. Պօլսոյ ռուսական դեսպան Պ. Նելիտօֆ նախորդ շաբթուն Ազգ. Պատրիարքարան երթալով, երեք քառորդ ժամու տեսակցութիւն մը ունեցեր է Օրմանեան Պատրիարքին հետ :

Աւասիկ Երեսի. ժողովին կողմէ ընտրուած նոր հոգաբարձութեանց կազմութիւնը :

Եկեղեցւոյ՝ Տեառք Կարապետ Տ. Աղապետան, Մարտիկ Բրուտեան, Յակոբ Քիւլհանեան :
Վարժարանի՝ Տ. Եղիկ Բահանայ, Տեառք՝ Եւսուֆ պէյ Աղիզ, Տիգրան Մկրտիչեան :

(1) Յար Տ'Ալիքանճրի որ արտասուած է Ֆրանսայի գրադէտուհիին այն յօդուածը, կը նկատէ զայն ժրքեւ սպեղանի մը հելլեններու սրտին զօր ամենքը կը Լքանեն, կըսէ, այսօր, մինչ ազնիւ կին մը իր փայլուն տաղանդը կը նուիրէ դատի մը զօր վեհանձն սրտերն ու բարձր մտքերը առանձին մնացած են պաշտպաններու :

Գեղեղմանտան՝ Տեառք Գրիգոր Եղիայեան՝ Սեդրա Դաւիթեան, Վառչապուհ Գալազեան, Աղբաւայ՝ Տ. Մամրէ Բահանայ, Տեառք Բիւզանդ Ալեքսան, Յովհաննէս Եսգըճեան :

Գահիրէի ազգ. երկսեռ վարժարանին (Գալլատեան) հոգաբարձութիւնը իր առաջին դործըն ըրաւ մրցման քննութեամբ որոշել ուսուցչական մարմինն : Հոգաբարձութեան առեւնապետ Աղիզ պէյի հրաւիրանօք՝ կրթական նախարարութեան կողմէ վարժարան եկած էր Վալպէրկ պէյ, նոյն նախարարութեան եւրոպական քարտուղարութեան դիւանին պետը, որ կատարեց ֆրանսերէնի ու անգլիերէնի քննութիւնները :

Ներկայ էին նաեւ եկեղեցական և աշխարհական հայ քննիչներ՝ մայրենի լեզուի համար :

Քննութեան վերջնական արդիւնքին համեմատ հետեւեալ կերպով կազմուած է վարժարանին կրթական պաշտօնէութիւնը .

Պ. Յովհաննէս Սէթեան հայերէն, Փրանսերէն, և անգլիերէն լեզուներու համար : Պ. Սիւրենեան՝ անգլիերէնի : Պ. Սուրէն Չաքրեան՝ ֆրանսերէնի, Պ. Կ. Նաւասարդեան՝ հայերէնի, Պ. Մ. Պօնճուզեան՝ ֆրանսերէնի, գեղադրութեան և գծագրութեան, Օր. Ուսանա Ճիւանեան՝ ֆրանսերէնի :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիդթօրիա թագուհոյն ծննդեան տարեդարձին առթիւ երկուշաբթի օրը Ապտինի հրապարակին վրայ անգլիական բանաւին կողմէ զօրահանդէս մը տեղի ունեցաւ ընդ հրամանատարութեամբ զօրապետ Քէննէթ Անտերսընի : Հանդէսին ներկայ էր նաեւ Լօրտ Քրօմըր : Օրէրայի հրապարակէն սկսեալ մինչեւ Ապտին տանող փողոցները հետաքրքիրներու բազմութեամբ լեցուած էին :

Զօրահանդէսը ամենայն կանոնաւորութեամբ կատարուեցաւ . միմիայն օդին սաստիկ տաքութեան պատճառաւ չորս զինուոր արեւահար ըլլալով անմիջապէս զետեղուեցան հիւանդակիւ կառքերու մէջ :

— Արաբերէն էլ Մուշիւր լիագրի տնօրէն խմբագիր Պ. Սարգիս՝ առջի օրը դատարան հրաւիրուեցաւ ուր ծանուցուեցաւ իրեն թէ եղեռնադատատենին առջեւ պիտի դատուի իր հրատարակած մէկ յօդուածին համար որ վիրաւորիչ ակնարկութիւններ կը պարունակէր Գերմանիոյ կայսեր դէմ : Այս յօդուած մատնանիշ եղած էր ֆրանքեգերմանական Լը Գուռիէ Տ'Եթիքը շարաթաթերթին կողմէ որ նոր սկսած է հրատարակուիլ ի Գահիրէ, գերմանացիի մը խմբագրութեամբ :

— Կը յիշուի թէ անցեալ ամիս, Խտիվական Օրէրային մէջ արաբերէն ներկայացման մը պահուն, Էլ-Ազհար մէտրէսէին շէյխերէն մէկը բեմին վրայ ելլելով գողբիչ բանախօսութիւն մը արտասանած էր : Այդ շէյխին հարցաքննութիւնն առաջ կը տարուի :

— Այդ գէպքին յաջորդ շաբթուն, գիշեր մը, խումբ մը ֆէլլահներ՝ ջահեր ի ձեռին գողում գոչումով շրջելով Օրէրայի հրապարակը, հակաքրիստոնէական ցոյց մը ընել փորձած էին : Ոստիկանութիւնը ցրուեց զանոնք,

չի մոռնալով պարագլուխները ձերբակալել և Ստեփան, թուով տանները հոգի, երեքական ամսուան բանտարկութեան դատապարտուեցան երեկ :

— Մարդահամարի գործողութիւնը որուն ձեռնարկուած է մէկ ամսէ ի վեր, պիտի աւարտի վերջնապէս Յունիս 1ին : Այժմէն քաղաքում տեղեկութիւններուն նայելով, եղիպտոսի բովանդակ ժողովրդեան թիւը կը հասնի ինը միլիոնի : 1882ին կատարուած մարդահամարին համեմատ, եղիպտոսական ժողովրդին թիւը 6,817,265 էր այդ թուականին :

Ա Ջ Դ

Ամեն անոնք՝ որոց մեր թերթը կը շրջուի և որ առաջին երկու թիւերը մեզ չ'են վերադարձներ, իրեն բաժանորդ պիտի նկատուին :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Աթէնք, 22 մայիս. — Կը հաւատեն թէ Պ. Սթուլիսիոյ յայտարարելէ զետեղանքներուն թէ Յունաստան պիտի մերժէ պատերազմական որ և է տուգանք ինչպէս նաեւ սահմաններու ճշդում : Չեզոք սահմանագիծ մը հաստատուեցաւ : Մանս գնդապետը Եպիքրոնէ վերադարձին անարգուեցաւ և սպառնալիք կրեց զանազան կայարաններէ անցած պահուն : ԲԱՐԻՉ, 22 մայիս. — Պ. Հանսթոմ ծախահարուեցաւ երբ յայտարարեց թէ կը յուսայ որ Եւրոպայի համաձայնութեան առջեւ՝ Թուրքիոյ պիտի հրաժարի իր պահանջներէն :

Գործը զանազալ պիտի ընթանայ, բայց ողջմտութեան խորհուրդները պիտի յաղթեն վերջ ի վերջը :

ԲԱՐԻՉ, 23 մայիս. — Սխալ է այն լուր թէ Էտհէմ փաշա ինք պիտի բանակի Յունաստանի հետ՝ խաղաղութեան պայմաններուն վրայ. այս պաշտօնը յանձնուած է Պոլսոյ գետնապետին : Զինուորապետը պիտի երկարաձգուի, եթէ հարկ ըլլայ : Էտհէմ փաշա իրենց տեղերը դարձուց ալպանիացի կամաւորները :

ԼՈՆՏՈՆ, 24 մայիս. — Վերթորիս թագուհոյն ծննդեան տարեդարձը տոնուեցաւ մեծ հանդէսով :

Կ. ՊՈԼԻՍ, 24 մայիս. — Բ. Դուռը իր պահանջած պատերազմական տուգանքին գումարը պիտի իջեցունէ և բանակցութեան պիտի մտնէ Թեալիոյ խնդրոյն համար :

Աթէնք, 25 մայիս. — Բաւական յուզում կը տիրէ այստեղ : Զորաց վերադարձին առթիւ երկուշաբթի կը սաստկանան :

ԼՈՆՏՈՆ, 22 մայիս. — Տէրութիւնը համաձայնած են ծանուցանել Թուրքիոյ թէ անկարելի է որ Թեալիոյ իրեն թողուի, թէեւ սահմանագիծայ ուղղափառական ճշդում մը կրնայ ընդունուիլ : Պատեւաբարական տուգանքի գումարը պէտք է իջուցուի : Հիւսկապտական զաշնագիրները-բաբիդիլապիսի-չեն կրնար ջնջուիլ թէեւ կարելի է բարեփոխել զանոնք :

Աթէնք, 24 մայիս. — Յոյն կառավարութիւնը արձակեց անկանոն զորքերը որոնք աւելի վնաս հասուցին քան օգուտ : 550 կամաւորներ որոնց 500ը ամերիկացի և 50ը Ֆրանսացի, հոս հասան և սահմանադրուի խրկուեցան :

Յունաստանի ապագան անստոյգ կ'երեւայ : Պատերազմական որ և է տուգանքի վճարումն անկարելի է, կը վախցուի որ անկարգութիւններ պատահին, մինչեւ իսկ յեղափոխութիւն մը :

Կամաւորներու վերադարձի պահուն, խտապանքներ, մեծ մասով անխնայական, շիթութիւն մը պատճառեցին ի Զալէրտա, փասն զի կառավարութիւնն արգիլած էր անոնց Աթէնք երթալ : Երկու հոգի սպաննուեցան և վեց հոգի վիրաւորուեցան :

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Կ. ՊՈԼԻՍ, 25 մայիս. — Ստիպանը հեռագիր մը ուղղելով Վիլհէլմ կայսեր՝ շնորհակալութիւն յայտնեց անոր տուած խորհուրդներուն համար և յոյս

յայտնեց թէ կայսրը Թուրքիոյ ցոյց պիտի տայ նաեւ թէ ինչ կերպով կրնայ ձեռք բերել իր յաղթողի իրաւունքներուն ճանաչումը :

Կ. ՊՈԼԻՍ, 26 մայիս. — Տէրութիւնը վերջնապէս Բ. Դուռնի ներկայացուցին հաւաքական ծանուցագիրը՝ հակառակորդներով մէկտեղ : Կը հաւանին սահմանադրի ուղղափառական ճշդում մը, ինչպէս նաեւ հիւսկապտական զաշնագիրներու բարեփոխման մը. բայց կը պնդեն թէ Թեալիոյն չի կրնար Թուրքիոյ ձեռքը անցնիլ ինչպէս նաեւ անկարելի է բարիդիւլապիսի ներքին ջնջումը : Ծանուցագիրը կը յայտնէ թէ պատեւաբարական տուգանքը զեղչուելու է :

ԲԱՐԻՉ, 25 մայիս. — Բ. Դուռը երկարաձգեց Թուրքիոյն դուռն ելլելու համար հեղինակաւորականներուն տրուած պատմանամը :

Աթէնք, 25 մայիս. — Յունաստան շոգնաւորներ յատկապէս Կարիպալտեան կամաւորներուն՝ իրենց տեղերը վերադառնալու համար :

ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԷ ՇԵՐՏ ՄԸ

Սրամիտ բտրեկամս

« Բան մը գրել, հիւսկ—հիւսկ, անմիջապէս հեքսթուս » . — Բայց, ստատանի սիրոյն, կեցիք քիչ մը գոնէ, որ գրական շունչ մը ժողովեմ մէջս — հիմակուանը գիտես որ . . . ծխախոտի է — Հրաման յականգ այնքան բաղաբաժնայ է սակայն, — եթէ կարելի է սոյն երկու բառերը ըծորդել, որ կշտապեմ շարադրել սա ծովի մոխի տողերս այն տեն, դոտ անձկութեամբ դոր անգամ մըն ալ զգացած եմ երբ խնջոյքի մը մէջ յանկարծ բռնադատուեցայ բանախօսութիւն մը կակաղելու :

Լսէ ուրեմն, բայց չ'է, երկու դուն ըսէ ինծի նախ թէ, ո՞րն է ամենէն հնարագէտ, ամենէն հանճարեղ ռեկլամի ձեւը կամ բանաձեւը որուն առջեւ ապուշ մնացած ըլլաս . . . փայլեան մը : Եթէ կուզես՝ լրագրատիրոջ դրական պատասխանը ես տամ քու տեղը, կարճատեսի անոնցիդ տակէն. « Գիտես նէ ըսէ, Փարսիսն համար գործածենք » . 25, սիրելիս, կատակը մէկ կողմ :

Լսած ես թերեւս թէ անգլիացի աշխարհահռչակ օճառաւորաճառը, գործիքակ. քեցիլին՝ շրջուն գրամի մետաղի վրայ իսկ Pear's soap կոխել տուած է. կընդունին որ հնարամտութիւնը խոշոր, անհաւատարի է : Հաւանաբար իմացած ես դարձեալ որ, երբ Պոս — Վիլ պողոտային վրայ ձի մը խնայ տատկի՝ Եանքիի զեղուն հնարագիտութեամբ, իսկոյն ձիուն վրայ կը խոյանան, փոքրիկ աղղեր փակցնելու, ապահով որ փողոյի ամբողջ ձիուն շարժը պիտի խոնտի ու աղղերը պիտի կարգապահին : Ուրիշ սիրելիս, ուրիշ — Է՛հ ինչ գիտնամ, շատ անհամար, անհատուածներ, որք իւրաքանչիւր ցեղի խառնուածքին ու մշակութեանը համեմատ այլազան եղանակներ կ'առնեն : Աղէկ, բաւական, բայց պիտի հաւատաս ինծի, պիտի դարձանա՞ս շատ, երբ քեզի ըսեմ թէ աղղարարութեան, գովեստի ամենէն աղղեցուցիչ բանաձեւը, ռեկլամի ռեֆորմը իր ամենէն միամիտ, ամենէն bête ձեւին մէջ, — չես կրակած իր — հայ խաթուն մը, հայ միջնորդ կին մը գտած յղացած է : Օ՛հ հայ կինը : « Գնա՛ր բանդ, անկարելի բան » Բայց հաւատաս ինծի, բարեկամս, հաւատաս : Ամուսնութեան միջնորդ կին մը, Կիւլիկ տուտուն, Աղապ — Քափուէն, տես, i i i i, կէտերը կը զնեմ կոր : Է՛հ ուրեմն, իր օրիորդ — ապրանքը ներդրուելու տենդուտ գերագրգռութեանը մէջ ինչ կը գուշակես որ ըսած ըլլայ յաղթապան, թեկնածու — յաճախորդին երեւակայութիւնը թովելու համար : Ըսէ, ըսէ, — Օ՛հ, անշուշտ, Ֆրանսացի միջնորդ կնկան տխմար գովասանքի աւանդական պաշտելի նմոյշը կայ միշտ. « Elle n'est pas jolie, mais elle aime tant sa mère ! » Բայց չ'է սիրելիս, մերինը, հը, մերինը աւելի, շատ աւելի զօրաւոր է. մտիկ ըրէ ու դատէ մանաւանդ :

ԹեկնԱՅՈՒՆ (սիւսպիլի, շատեր տեսած) — Է՛յ մասնագէտին ուսմունքը ո՞րտեղուանքն է նայինք, Կիւլիկ խաթուն :

Կիւլիկի ԽԱԹՈՒՆ — Վա՛յ օրդոտի, ինչո՞ւր մէթ ընեմ նէ քիչ է. լուծմունք մը, լուծմունք մը քի, ինչ ըսեմ . . . չաթըը չաթըը « Արեւելք » կը կարդայ :

Tête du prétendant.

Աղեփանդիա

ԱՍԵՂ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

“ԻՆԹԵՐՎԻՍՏԷ”

(Գ Ա Ն Թ Է Զ Ի)

Հետաքրքրուեցանք զիտնալ թէ մեր գաղթականներուն վրայ եգիպտոս ինչ տպաւորութիւն ըրած է, ինչպէս կը կը գտնեն երկիրը և կամ ո՞րն է վստիսի ու Նեղոսի ափերուն միջեւ գտնուած տարբերութիւնը. հետեւաբար իրենց զիտնած ըլլալով՝ հետեւեալ գրաւոր պատասխանները ընդունած ենք զորս նոյնութեամբ կը հրատարակենք :

Աւասիկ Գահիրէն զրկուածները .

* * *

« Զարմանալի տեղ մ'է եգիպտոս :

Պոլիս երբ սենեակդ դովայնել կ'ուղես, պատուհանները կը բանաս. հոս, ընդհակառակը գոցուած ես » :

ՎԱՀԱՆ

* * *

« Պոլիս եղած ատենս երբ երիտասարդ մը կը տեսնէի, կաշխատէի որ աչքը մտնամ. հոս հէմէն թեւը մտնալ կուգայ կոր » :

ՍՕՅԻ

* * *

« Ա՛յ կընէք ամմա, հոս նստըվելիք տեղ չ'է, օխ թը ամիս է հոս էմ, տուհա եանլըն մը չեղալ : Կէօգիւնիս սէվտիլմ Սթամպուլ » :

ՀԱՄԲԱՐ

* * *

« Աչկա էլլա, աս բէք անըման տեղ է. արապաները պիլէ թէլէլաֆով կը քալեն կոր » :

ԷՖՏԻԿ ՏՈՒՏՈՒ

* * *

« Պոլիս պուզին էրիսը ծմեռ կը տեսնաս. հոս ամառը » :

ՎԻՐԺԻՆ

* * *

« Հոս մարին չորս անգամ կը հնձեն. մէյ մ'ալ Ալվալեանը կը հնձէ, հինգ » :

ՊՕԼՍԵՑԻ ՄԸ

* * *

« Հոս թոխը գողերուն համար շինուած է. իսկ Պոլիս՝ գողերը թալիսին համար » :

ԿԱՐԱՊԵՏ

* * *

« Հոս բոլորով նամակ կամ կուռք զրկես նէ շիտակ տեղը կը հասնի կոր. մենք ասոր սորված չէինք . . . Պոլիս » :

ՎԱՀԱՆԱԿԱՆ ՄԸ

* * *

Աղբրանդրիոյն մինակ հատ մը ստացած ենք իսկ մը գաղթականներէ ստորագրուած :

« Գաղթականներու համար Աղբրանդրիոյն Պոլիս երթալու էն կարճ ճամբան . . . մէյ մը Գահիրէ երթալն է » :

Վասն ճշդութեան

ԹԱՏԱՄԷՍ

Օսար երկիրներու մէջ գտնուող մեր բաժանորդներն իրենց բաժնեգրները կրնան մեզ հասցնել « մանսա-փոսթ » ու ուղղեալ առ » :

ARTIN ALPIAR

Directeur-Redacteur du Journal PAROS

Le CAIRE (EGYPTE)

ՏՕԲԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սսամոսի, մորի եւ զղային հիւանդութեանց : Կ'ընդունի իրեն զիտնող հիւանդներ Բանսիօն Ֆինց, Հօթել Քօնդիման. քալի դեմ, ամեն օր առաւօտեան ժամը 10էն 11 եւ կեսօրէն վերջ 2էն 4: Բոլոր վկայեալ աղբաճ օրի կը դարմանուին :

Le Gérant: HENRY SAKAKINI

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԷՅԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՐԱՆՈՒՄ ՄԵԾԱԳՈՅՆ «ՇԱՐԱ ԱՊԱՊ»
ԽԱՆԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՄ:

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՌԷՅԻՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ	1000 հաար	2 1/2 Անգ. ոսկի
" Խըտիլեալ "	" "	2 " "
" Պալատական "	" "	1 1/2 " "
" Պօհճա "	" "	1 1/4 " "
" Նաթիւրէլ "	" "	1 " "
" Ճօռ "	" "	20 փրանք

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ հորաբոյժ հիւանդներու համար,
կազմուիչ սեփ, շնչառական գործարաններու, ար-
եան եւ ջրային հիւանդութիւններու:

Կը յանձնարարուի հեծեղանի գործածողներուն:
Մեանչելի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մքերանոց. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱՒ ԱՆԼՊՈ—
Եզիպտական դեղաւրանը Էզպէֆիէ, Դահիւրէ:

ՀԱՄՄԱՄ

ԵՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱՆԻՄ ՓԱՇԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍՔԼԱՆՏԻՏ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՑ Է

Էրիկ մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10
և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:
Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր:

Ուրբաթ և կիրակի օրերը միմիայն Էրիկ մարդոց համար
Կիրակի և տան օրերը ՀԱՄՄԱՄԸ կէս օրէն վերջ
գոյ Է:

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՒ ՄԵԿՆՈՒՄ
ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐՈՒ

Երկուշաբթի Մայիս 24էն մինչեւ Կիրակի Մայիս 30

ԺԱՄԱՆՈՒՄ

Երրորդայէն. 42. Եւ կիրակի
Տաճկաստանէն. շր. (Եզիպտական)
Տաճի. Յունաս. Ռուսիա. կիր. (Ռուսական)
Սուրբայէն. Եւ. ուր.
Կիրարէն. Եւ.

ՄԵԿՆՈՒՄ

Երրորդայ համար. Եւ. ուր. շր.
Տաճկաստան. և Ռուսիայ ուր. (Ռուսական)
Տաճկաստանի. ուր. (Եզիպտական)
Կիրարոսի. ուր.
Սուրբայ. 42. " 72.

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԵ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ
ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՏ
ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒՅՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եզիպտոսի օր և Է. քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնա-
մը և վաճառք կը կատարուին:

Վաճարեալան սպաքուրիսն այցեֆարսերու և տոններու

Տպարանը բաց Է ամեն օր բացի կիրակի և տոն օրերէ առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳԻԺ

Գ Ա Յ Ս Ր Ա Ն Ք		խառն	ամ. նիւթ.	կէս ուղ.	ամ. նիւթ.	Էրարէն	ամ. նիւթ.	Էրարէն	ամ. նիւթ.	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Գահիրէ	մեկ.	առաւ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	Երեկ. 7 15	Երեկ. 11 —
Պէնէա	"	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առաւ. 12 35
(Թանթա)	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	"	Երեկոյ 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	Երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅԻ ԳԱՀԻՐԷ ԳԻԺ

Գ Ա Յ Ս Ր Ա Ն Ք		ամ. նիւթ.	կէս ուղ.	ամ. նիւթ.	Էրարէն	խառն	ամ. նիւթ.	Էրարէն	ամ. նիւթ.	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	առաւ. 1,2,3 կգ.	Երեկ. 1,2,3 կգ.	Երեկ. 1,2 կգ.	1 2 3 կարգ	Երեկ. կարգ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	"	—	8 6	8 58	10 2	Երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առաւ. 1 9
(Թանթա)	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնէա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԷԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԷԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՅՈՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՅՈՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէլ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնէա)	ժամ.	Երեկոյ 12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	Երեկոյ 1 20	
Ջակագիլ }	ժամ.	1 34	8 54	Ջակագիլ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	Պէնէա)	ժամ.	4 13	9 47
Սիւէլ կայարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	9 4
Տք (քարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35